


Նպաստների ամփոփում և ապահովագրություն. ինչ է ապահովագրում այս ծրագիրը, և որքան էք վճարելու Ապահովագրված ծառայությունների

 Այս Նպաստների և ապահովագրության ամփոփումը (Summary of Benefits and Coverage, SBC) ցույց է տալիս, թե ինչպես դուք և [ծրագիրը](#) կբաշխեք ծախսերն ապահովագրված առողջական խնամքի ծառայությունների համար: ՆՇՈՒՄ այս [ծրագրի](#) արժեքի մասին տեղեկությունները (կոչվում է [ապահովագին](#)) կտրամադրվեն առանձին: Սա միայն ամփոփում է: Ձեր ապահովագրության մասին տեղեկությունների կամ ապահովագրության ամբողջական պայմանների պատճենը ստանալու համար գանգահարեք [1-844-854-7272](tel:1-844-854-7272) հեռախոսահամարով կամ այցելեք մեզ [lacare.org](http://lacare.org) հասցեով: Հաճախակի օգտագործվող տերմինների բնութագրող սահմանումների համար, ինչպիսիք են [թույլատրելի գումար](#), [հաշվեկշռի հաշվի ներկայացում](#), [համապահովագրություն](#), [համավճար](#), [հանելի գումար](#), [մատակարար](#), կամ այլ [ընդգծված](#) սահմանումները, տե՛ս Մահմանումների բառարանը: Մահմանումների բառարանը կարող էք գտնել [www.healthcare.gov/sbc-glossary](http://www.healthcare.gov/sbc-glossary) com կայքում կամ գանգահարեք [1-844-854-7272](tel:1-844-854-7272) հեռախոսահամարով՝ պատճենը խնդրելու համար:

| Կարևոր հարցեր   | Պատասխաններ   | Ինչու է սա կարևոր՝  |
|---|---|---|
| Ինչքա՞ն է ընդհանուր <a href="#">հանելի գումարը</a> :  | \$0   | Այս <a href="#">ծրագրի</a> կողմից ապահովագրող ծառայությունների ձեր ծախսերի համար տեսեք Սովորական բժշկական իրադարձությունների աղյուսակը: |
| Արդյո՞ք այս ծառայություններն ապահովագրվում են, նախքան դուք կվճարեք ձեր <a href="#">հանելի գումարը</a> : | Ոչ  | Դուք պետք է վճարեք <a href="#">հանելի գումարը</a> , նախքան <a href="#">ծրագիրը</a> կվճարի որևէ ծառայության համար:                       |
| Կա՞ն արդյոք այլ <a href="#">հանելի գումարներ</a> որոշակի ծառայությունների համար:                        | Ոչ  | Պարտավոր չեք վճարել <a href="#">հանելի գումարներ</a> որոշակի ծառայությունների համար:  |
| Որքա՞ն է <a href="#">գրպանից վճարվող գումարի սահմանն</a> այս <a href="#">ծրագրի</a> համար:              | \$1000  | <a href="#">Գրպանից վճարվող ծախսերի սահմանն</a> առավելագույնն է, ինչ կարող էք վճարել ապահովագրված ծառայությունների համար                |
| Ի՞նչը չի ընդգրկվում <a href="#">գրպանից վճարվող ծախսերի սահմանի</a> մեջ:                                | <a href="#">Ապահովագներ</a> , <a href="#">հաշվեկշռի հաշվի ներկայացում</a> և առողջական խնամքի ծառայություններ, որոնք | Չնայած դուք վճարում եք այդ ծախսերի համար, դրանք չեն հաշվվում ձեր <a href="#">գրպանից վճարվող ծախսերի սահմանի</a> դիմաց:                 |

(DT - վավերական OMB համար՝ 1545-0047/Ուժի մեջ է մինչև՝ 12/31/2019)(DOL - վավերական OMB համար՝ 1210-0147/Ուժի մեջ է մինչև՝ 5/31/2022)  
 (HHS - վավերական OMB համար՝ 0938-1146/Ուժի մեջ է մինչև՝ 10/31/2022)



**PASC-SEIU Տնային խնամքի ծառայողների առողջապահական ծրագիր**  
**Տնային աջակից սպասարկության աշխատողների համար**

Ապահովագրության ժամանակահատված՝ 2020 - 2021

**Նպաստների ամփոփում և ապահովագրություն.** ինչ է ապահովագրում այս ծրագիրը, և որքան էք վճարելու Ապահովագրված ծառայությունների **ապահովագրության համար՝ Անհատական | Ծրագրի տեսակ՝ HMO**

|   |   |   |
|---|---|---|
|   | <p>չեն ապահովագրվում այս ծրագրի կողմից:</p>   |   |
| <p><b>Դուք ավելի քիչ կվճարեք, եթե օգտվեք <a href="#">ցանցի մատակարարից</a>:</b></p>             | <p><b>Այո:</b> Պայմանագիր ունեցող մատակարարների ցանկը կարող էք տեսնել <a href="http://lacare.org">lacare.org</a> կայքում կամ զանգահարել 1-844.854.7272 հեռախոսահամարով:</p> | <p>Այս <a href="#">ծրագիրն</a> օգտագործում է <a href="#">մատակարարների ցանց</a>: Դուք ավելի քիչ կվճարեք, եթե օգտվեք մասնակից <a href="#">մատակարարից</a> ծրագրի <a href="#">ցանցում</a>: Դուք ամենաշատը կվճարեք, եթե օգտվեք <a href="#">ոչ-մասնակից մատակարարից</a>, և կարող էք հաշիվ ստանալ <a href="#">մատակարարից մատակարարի</a> կողմից գանձված գումարի և ձեր <a href="#">ծրագրի</a> կողմից վճարվող գումարի տարբերության չափով (<a href="#">հաշվեկշռի հաշվի ներկայացում</a>): Իմացեք, որ ձեր <a href="#">մասնակից մատակարարը</a> կարող է օգտվել <a href="#">ոչ-մասնակից մատակարարից</a> որոշ ծառայությունների համար (ինչպես օրինակ՝ յարրատոր անայիզներ): Ծառայություններ ստանալուց առաջ տեղեկացեք <a href="#">մատակարարից</a>:</p> |
| <p><b>Ձեզ <a href="#">ուղեգիր</a> հարկավոր է <a href="#">մասնագետի</a> այցելելու համար:</b></p> | <p><b>Այո:</b></p>  | <p>Այս <a href="#">ծրագիրը</a> կվճարի <a href="#">մասնագետի</a> այցելելու համար ապահովագրված ծառայությունների ծախսերի մի մասը կամ ամբողջը, բայց միայն եթե <a href="#">ուղեգիր</a> ստանաք, նախքան <a href="#">մասնագետի</a> այցելելը:</p>  |
| <p><b>Կա՞ն ծառայություններ, որոնք ապահովագրված չեն այս ծրագրի կողմից:</b></p>                   | <p><b>Այո</b></p>   | <p>Այս ծրագրով չապահովագրված որոշ ծառայություններ նշված են 5-րդ էջում: Տեսե՛ք ձեր վկայագիրը կամ ծրագրի փաստաթղթերը բացառված ծառայությունների մասին մանրամասներին ծանոթանալու համար:</p>   |

\* Սահմանափակումների և բացառությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [ծրագրի](#) կամ ապահովագրության փաստաթղթերը [lacare.org](http://lacare.org) կայքում:



**Նպաստների ամփոփում և ապահովագրություն.** ինչ է ապահովագրում այս ծրագիրը, և որքան էք վճարելու Ապահովագրված ծառայությունների **ապահովագրության համար՝ Անհատական | Ծրագրի տեսակ՝ HMO**

Այս աղյուսակում ներկայացված [համավճարների](#) և [համապահովագրության](#) բոլոր ծախսերը նշված են ձեր [հանելի գումարը](#) վճարելուց հետո, եթե [հանելի գումար](#) է կիրառվում:

- Ապահովագրված ծառայությունների համար ծրագրի վճարած գումարը հիմնվում է [թույլատրված գումարի](#) վրա: Եթե արտագանցային [մատակարարը](#) գանձում է [թույլատրված գումարից](#) ավելի, թերևս դուք ստիպված լինեք վճարել տարբերությունը: Օրինակ, եթե արտագանցային հիվանդանոցը գանձում է \$1500 գիշերելու համար և [թույլատրված գումարը](#) կազմում է \$1000, թերևս դուք ստիպված լինեք վճարել \$500 տարբերությունը: (Սա կոչվում է [հաշվեկշռի հաշվի ներկայացում](#)): Որոշ դեպքերում ծրագրից դուրս մի մատակարար կարող է ապահովագրված ծառայություններ տրամադրել ցանցի հաստատությունում, որտեղ դուք լիազորվել եք խնամք ստանալու համար: Դուք պատասխանատու չեք որևէ գումարի համար, որը գերազանցում է ձեր ծախսաբաժինը՝ ձեր ստացած ապահովագրված ծառայությունների համար ծրագրի հաստատությունում կամ ցանցում գործող հաստատություններում, որտեղ ձեզ լիազորել ենք, որ ստանաք խնամքը:
- Այս ծրագիրը պահանջում է, որ օգտագործեք ցանցում գործող [մատակարարների](#), եթե այլապես չի լիազորվել ծրագրի կողմից:

| Սովորական բժշկական իրադարձություն  | Չեզ անհրաժեշտ ծառայություններ                                  | Ինչ էք վճարելու                          |  | Մահմանափակումներ, բացառություններ և կարևոր այլ տեղեկություններ   |
|--|--|--|--|--|
|  |  | Ցանցի մատակարար (Դուք ամենափչյր կվճարեք) | Արտագանցային մատակարար (Դուք ամենաշատ կվճարեք) |  |
| <b>Եթե այցելում եք առողջապահական խնամքի <a href="#">մատակարարի</a> գրասենյակ կամ կլինիկա</b> | Առաջնային խնամքի այց վնասվածք կամ հիվանդություն բուժելու համար | \$5 <a href="#">համավճար</a> /այց        | Չի ապահովագրվում                               | Չկա  |
|  | <a href="#">Մասնագետի</a> այց                                  | \$2 <a href="#">համավճար</a> /այց        | Չի ապահովագրվում                               | Պահանջվում է ուղեգիր առաջնային խնամքի բժշկից: Անդամը կվճարի ծառայությունների համար, եթե ուղեգիր չի տրվել:* |
|  | Ուրիշ մասնագետների գրասենյակ այց                               | Չի ապահովագրվում                         | Չի ապահովագրվում                               | Չկա  |
|  | <a href="#">Կանխարգելիչ խնամք/գնում/</a> պատվաստումներ         | \$5 <a href="#">համավճար</a> /այց        | Չի ապահովագրվում                               | Չկա  |

\* Մահմանափակումների և բացառությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [ծրագրի](#) կամ ապահովագրության փաստաթղթերը [lacare.org](http://lacare.org) կայքում:



**Նպաստների ամփոփում և ապահովագրություն.** ինչ է ապահովագրում այս ծրագիրը, և որքան էք վճարելու Ապահովագրված ծառայությունների **ապահովագրության համար՝ Անհատական | Ծրագրի տեսակ՝ HMO**

| Սովորական բժշկական իրադարձություն   | Չեզ անհրաժեշտ ծառայություններ                              | Ինչ էք վճարելու                          |   | Սահմանափակումներ, բացառություններ և կարևոր այլ տեղեկություններ  |
|---|--|--|---|---|
|   |  | Ցանցի մատակարար (Դուք ամենաքիչը կվճարեք) | Արտացանցային մատակարար (Դուք ամենաշատը կվճարեք) |   |
| Եթե ստուգում եք անցնում   | <a href="#">Ախտորոշիչ ստուգում</a> (ռենտգեն, արյան անալիզ) | \$0 մեկ թեստի համար                      | Չի ապահովագրվում                                | Չկա   |
|   | Պատկերում (CT/PET զննումներ, MRI-ներ)                      | \$0 մեկ թեստի համար                      | Չի ապահովագրվում                                | Չկա   |
| Եթե ձեր հիվանդության կամ վիճակի բուժման համար ձեզ դեղեր են հարկավոր <a href="#">Դեղատոմսային դեղի ապահովագրության</a> մասին լրացուցիչ տեղեկություններ հասանելի են <a href="https://www.lacare.org/members/getting-care/pharmacy-services">https://www.lacare.org/members/getting-care/pharmacy-services</a> կայքում | Դեղացանկում գտնվող քիմիական անունով (ջեներիկ) դեղեր        | \$5 յուրաքանչյուր դեղատոմսի համար        | Չի ապահովագրվում                                | Ապահովագրում է մինչև 30-օրյա պաշարի համար: 90-օրյա պաշար կայունացնող դեղերի համար: Կիրառելի են բացառությունները, <a href="#">բացառված ծառայությունների</a> վերաբերյալ հավելյալ տեղեկության համար տեսեք ձեր ապահովագիրը կամ ծրագրի փաստաթուղթը.* |
|   | Դեղացանկում գտնվող ապրանքանիշով դեղեր                      | \$5 յուրաքանչյուր դեղատոմսի համար        | Չի ապահովագրվում                                | Ապահովագրվում է մինչև 30-օրյա պաշար: Կիրառելի են բացառությունները, <a href="#">բացառված ծառայությունների</a> վերաբերյալ հավելյալ տեղեկության համար տեսեք ձեր ապահովագիրը կամ ծրագրի փաստաթուղթը.*   |
|   | Ոչ-դեղացանկային դեղեր                                      | \$5 յուրաքանչյուր դեղատոմսի համար        | Չի ապահովագրվում                                | Ապահովագրվում է, եթե լիազորվել է: Կիրառելի են բացառությունները, <a href="#">բացառված ծառայությունների</a> վերաբերյալ հավելյալ տեղեկության համար տեսեք ձեր ապահովագիրը կամ ծրագրի փաստաթուղթը.*  |

\* Սահմանափակումների և բացառությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [ծրագրի](#) կամ ապահովագրության փաստաթղթերը [lacare.org](https://www.lacare.org) կայքում:



**Նպաստների ամփոփում և ապահովագրություն.** Ինչ է ապահովագրում այս ծրագիրը, և որքան էք վճարելու Ապահովագրված ծառայությունների **ապահովագրության համար՝ Անհատական | Ծրագրի տեսակ՝ HMO**

| Սովորական բժշկական իրադարձություն                        | Չեզ անհրաժեշտ ծառայություններ                                | Ինչ էք վճարելու                          |   | Սահմանափակումներ, բացառություններ և կարևոր այլ տեղեկություններ   |
|--|--|--|---|--|
|  |  | Ցանցի մատակարար (Դուք ամենաքիչը կվճարեք) | Արտացանցային մատակարար (Դուք ամենաշատը կվճարեք) |  |
| <b>Եթե ամբուլատոր վիրահատություն ունեք</b>               | Հաստատության վճար (օրինակ՝ ամբուլատոր վիրահատության կենտրոն) | \$0 <a href="#">համավճար</a>             | Չի ապահովագրվում                                | Կիրառելի են բացառությունները, <a href="#">բացառված ծառայությունների</a> վերաբերյալ հավելյալ տեղեկության համար տեսեք ձեր ապահովագիրը կամ ծրագրի փաստաթուղթը*: |
|  | Բժշկի/վիրաբույժի վճարներ                                     | \$0 <a href="#">համավճար</a>             | Չի ապահովագրվում                                | Կիրառելի են բացառությունները, <a href="#">բացառված ծառայությունների</a> վերաբերյալ հավելյալ տեղեկության համար տեսեք ձեր ապահովագիրը կամ ծրագրի փաստաթուղթը*: |
| <b>Եթե ձեզ անհապաղ բժշկական ուշադրություն է հարկավոր</b> | <a href="#">Շտապ օգնության կայանի ծառայություններ</a>        | \$35 <a href="#">համավճար</a>            | \$35 <a href="#">համավճար</a>                   | Չեղարկվում է, եթե ձեզ հիվանդանոց են ընդունում:   |
|  | <a href="#">Արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրում</a>        | \$0 <a href="#">համավճար</a>             | \$0 <a href="#">համավճար</a>                    | Բացառում է ապահովագրումն ինքնաթիռով, մարդատար մեքենայով, տաքսիով կամ հասարակական փոխադրման այլ միջոցներով:   |
|  | <a href="#">Հրատապ խնամք</a>                                 | \$5 <a href="#">համավճար</a>             | \$5 <a href="#">համավճար</a>                    | Արտացանցային ապահովագրում է միայն L.A. վարչաշրջանից դուրս:   |
| <b>Եթե հիվանդանոցում մնաք</b>                            | Հաստատության վճար (օրինակ՝ հիվանդանոցի սենյակ)               | \$0 <a href="#">համավճար</a>             | Չի ապահովագրվում                                |  |
|  | Բժշկի/վիրաբույժի վճարներ                                     | \$0 <a href="#">համավճար</a>             | Չի ապահովագրվում                                |  |

\* Սահմանափակումների և բացառությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [ծրագրի](#) կամ ապահովագրության փաստաթղթերը [lacare.org](http://lacare.org) կայքում:



**L.A. Care**  
PASC-SEIU

**PASC-SEIU Տնային խնամքի ծառայողների առողջապահական ծրագիր**  
**Տնային աջակից սպասարկության աշխատողների համար**

Ապահովագրության ժամանակահատված՝ 2020 - 2021

**Նպաստների ամփոփում և ապահովագրություն.** Ինչ է ապահովագրում այս ծրագիրը, և որքան էք վճարելու Ապահովագրված ծառայությունների **ապահովագրության համար՝ Անհատական | Ծրագրի տեսակ՝ HMO**

| Սովորական բժշկական իրադարձություն   | Չեզ անհրաժեշտ ծառայություններ                              | Ինչ էք վճարելու                         |   | Սահմանափակումներ, բացառություններ և կարևոր այլ տեղեկություններ               |
|---|--|---|---|--|
|   |  | Ցանցի մատակարար (Դուք ամենափչր կվճարեք) | Արտացանցային մատակարար (Դուք ամենաշատը կվճարեք) |  |
| Եթե ձեզ հարկավոր են հոգեկան առողջության, վարվեցողական առողջության կամ թմրանյութի չարաշահման ծառայություններ | Ամբուլատոր ծառայություններ                                 | \$5 <a href="#">համավճար</a>            | Չի ապահովագրվում                                | Հոգեբանական ստուգման համար պահանջվում է նախօրոք լիազորում:                   |
|   | Հաստատությունում մատուցվող ամբուլատոր ծառայություններ      | \$0 <a href="#">համավճար</a>            | Չի ապահովագրվում                                | Որոշ ծառայությունների համար նախօրոք լիազորում է հարկավոր*:                   |
|   | Ստացիոնար ծառայություններ                                  | \$0 <a href="#">համավճար</a>            | Չի ապահովագրվում                                | Նախօրոք լիազորում է պահանջվում*:   |
| Եթե հղի էք  | Գրասենյակի այցեր   | \$5 <a href="#">համավճար</a>            | Չի ապահովագրվում                                |  |
|   | Երկունքի/ծննդաբերության մասնագիտացված ծառայություններ      | \$0 <a href="#">համավճար</a>            | Չի ապահովագրվում                                |  |
|   | Երկունքի/ծննդաբերության հաստատության ծառայություններ       | \$0 <a href="#">համավճար</a>            | Չի ապահովագրվում                                |  |
| Եթե ձեզ ապաքինման կամ ուրիշ հատուկ առողջական կարիքների համար օգնություն է հարկավոր                          | <a href="#">Տանք մատուցվող առողջական խնամք</a>             | \$0 <a href="#">համավճար</a>            | Չի ապահովագրվում                                | Բժշկականորեն անհրաժեշտ հմուտ խնամք: Խնամակալական խնամքը չի ապահովագրում*:    |
|   | <a href="#">Վերականգնողական ծառայություններ</a>            | \$5 <a href="#">համավճար</a>            | Չի ապահովագրվում                                | Ներառում է ամբուլատոր ֆիզիկական, աշխատանքային, խոսքի և շնչառության թերապիա*: |
|   | <a href="#">Ունակությունների զարգացման ծառայություններ</a> | Չի ապահովագրվում                        | Չի ապահովագրվում                                | Չի ապահովագրվում   |

\* Սահմանափակումների և բացառությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [ծրագրի](#) կամ ապահովագրության փաստաթղթերը [lacare.org](http://lacare.org) կայքում:



**L.A. Care**  
**PASC-SEIU**

**PASC-SEIU Տնային խնամքի ծառայողների առողջապահական ծրագիր**  
**Տնային աջակից սպասարկության աշխատողների համար**

Ապահովագրության ժամանակահատված՝ 2020 - 2021

**Նպաստների ամփոփում և ապահովագրություն.** ինչ է ապահովագրում այս ծրագիրը, և որքան էք վճարելու Ապահովագրված ծառայությունների **ապահովագրության համար՝ Անհատական | Ծրագրի տեսակ՝ HMO**

| Սովորական բժշկական իրադարձություն                             | Չեզ անհրաժեշտ ծառայություններ                      | Ինչ էք վճարելու                          |   | Սահմանափակումներ, բացառություններ և կարևոր այլ տեղեկություններ   |
|---|--|--|---|--|
|   |  | Ցանցի մատակարար (Դուք ամենաքիչը կվճարեք) | Արտացանցային մատակարար (Դուք ամենաշատը կվճարեք) |  |
|   | <a href="#">Հնուտ բուժքույրական խնամք</a>          | \$0 <a href="#">համավճար</a>             | Չի ապահովագրվում                                | Նպաստը սահմանափակվում է առավելագույնը 100 օրով յուրաքանչյուր նպաստի տարում:*   |
|   | <a href="#">Տնական օգտագործման բժշկական սարքեր</a> | \$0 <a href="#">համավճար</a>             | Չի ապահովագրվում                                | Տան համար սարքեր, որոնք օգտագործվում են, ինչպես բժշկականորեն անհրաժեշտ է:*   |
|   | <a href="#">Անբուժելի հիվանդի ծառայություններ</a>  | \$0 <a href="#">համավճար</a>             | Չի ապահովագրվում                                | Սահմանափակվում է այն անհատներով, ովքեր ախտորոշվել են մահացու հիվանդությամբ՝ 12 ամսից ոչ ավել կյանքի տևողության ակնկալիքով: |
| Եթե ձեր երեխան կարիք ունի ատամնաբուժական կամ տեսողական խնամքի | Երեխաների աչքերի քննություններ                     | Չի ապահովագրվում                         | Չի ապահովագրվում                                | Չի ապահովագրվում   |
|   | Երեխաների ակնոցներ                                 | Չի ապահովագրվում                         | Չի ապահովագրվում                                | Չի ապահովագրվում   |
|   | Երեխաների ատամնաբուժական ստուգում                  | Չի ապահովագրվում                         | Չի ապահովագրվում                                | Չի ապահովագրվում   |

\* Սահմանափակումների և բացառությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [ծրագրի](#) կամ ապահովագրության փաստաթղթերը [lacare.org](http://lacare.org) կայքում:



**L.A. Care**  
**PASC-SEIU**

**PASC-SEIU Տնային խնամքի ծառայողների առողջապահական ծրագիր**  
**Տնային աջակից սպասարկության աշխատողների համար**

Ապահովագրության ժամանակահատված՝ 2020 - 2021

**Նպաստների ամփոփում և ապահովագրություն.** ինչ է ապահովագրում այս ծրագիրը, և որքան էք վճարելու Ապահովագրված ծառայությունների **ապահովագրության համար՝ Անհատական | Ծրագրի տեսակ՝ HMO**

**Բացառված ծառայություններ և այլ ապահովագրված ծառայություններ.**

|  |   |   |
|--|---|---|
| <p><b>Ծառայություններ, որոնք ձեր <a href="#">ծրագիրը</a> հիմնականում ՉԻ ապահովագրում (լրացուցիչ տեղեկությունների համար ստուգեք ձեր ապահովագիրը կամ <a href="#">ծրագրի</a> փաստաթուղթը և ցանկացած այլ <a href="#">բացառված ծառայությունների</a> ցանկը):</b></p> |   |   |
| <ul style="list-style-type: none"> <li>• Ասեղնաբուժություն</li> <li>• Ոսկրահարդարման խնամք</li> <li>• Գեղարարական վիրաբուժություն</li> <li>• Ունակությունների զարգացման ծառայություններ</li> </ul>   | <ul style="list-style-type: none"> <li>• Լսողական սարքեր</li> <li>• Անպտղության բուժում (բացի բժշկականորեն անհրաժեշտ բժշկական վիճակների համար)</li> <li>• Երկարաժամկետ խնամք</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>• Մասնավոր պարտականությամբ բուժքույրություն</li> <li>• Ատամների սովորական խնամք (բացի բժշկականորեն անհրաժեշտից)</li> <li>• Աչքի սովորական խնամք</li> <li>• Ոտքի սովորական խնամք</li> </ul> |

**Ձեր իրավունքներն ապահովագրությունը շարունակելու համար.** կան գործակալություններ, որոնք կարող են օգնել, եթե ցանկանում եք շարունակել ձեր ապահովագրությունն այն ավարտվելուց հետո: Այս գործակալությունների կոնտակտային տվյալներն են՝ [insert State, HHS, DOL, and/or other applicable agency contact information]: Ձեզ համար մատչելի կարող են լինել նաև այլ ապահովագրական տարբերակներ, ներառյալ անհատական ապահովագրություն ձեռք բերելը [Առողջության ապահովագրության շուկա](#) միջոցով: [Շուկայի](#) մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [www.HealthCare.gov](http://www.HealthCare.gov) կայքը կամ զանգահարեք 1-800-318- 2596 հեռախոսահամարով:

**Բողոքի և բողոքարկման ձեր իրավունքները.** կան գործակալություններ, որոնք կարող են օգնել, եթե զանգատ ունեք ձեր [ծրագրի](#) նկատմամբ՝ [հայցի](#) մերժման հետ կապված: Այս զանգատը կոչվում է [բողոք](#) կամ [բողոքարկում](#): Ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք նպաստների բացատրությունը, որը կստանաք այդ բժշկական [հայցի](#) համար: Ձեր [ծրագրի](#) փաստաթղթերն ամբողջական տեղեկություններ են տրամադրում նաև այն մասին, թե ինչպես որևէ պատճառով ներկայացնել [հայց](#), [բողոքարկում](#), կամ [բողոք](#) ձեր [ծրագրին](#): Ձեր իրավունքների, այս ծանուցման կամ օգնության մասին լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք՝ [insert applicable contact information from instructions]:

\* Մահմանափակումների և բացառությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [ծրագրի](#) կամ ապահովագրության փաստաթղթերը [lacare.org](http://lacare.org) կայքում:





**L.A. Care**  
**PASC-SEIU**

**PASC-SEIU Տնային խնամքի ծառայողների առողջապահական ծրագիր**  
**Տնային աջակից սպասարկության աշխատողների համար**

Ապահովագրության ժամանակահատված՝ 2020 - 2021

**Նպաստների ամփոփում և ապահովագրություն.** Ինչ է ապահովագրում այս ծրագիրը, և որքան էք վճարելու Ապահովագրված ծառայությունների **ապահովագրության համար՝ Անհատական | Ծրագրի տեսակ՝ HMO**

**Տրամադրում է արդյոք այս ծրագիրը Նվազագույն էական ապահովագրում: Այո**

Նվազագույն էական ապահովագրումը հիմնականում ներառում է ծրագրեր, առողջության ապահովագրություն, որոնք մատչելի են Շուկայի կամ այլ անհատական շուկայի ապահովագրությունների, Medicare-ի, Medicaid-ի, CHIP-ի, TRICARE-ի և որոշ այլ ապահովագրությունների միջոցով: Եթե իրավասու եք Նվազագույն էական ապահովագրման որոշ տեսակների համար, դուք թերևս իրավասու չլինեք ապահովագնի հարկային վարկի համար:

**Համապատասխանում է արդյոք այս ծրագիրը Նվազագույն արժեքի չափանիշներին: Այո**

Եթե ձեր ծրագիրը չի համապատասխանում Նվազագույն արժեքի չափանիշներին, ձուք թերևս իրավասու կլինեք ապահովագնի հարկային վարկի համար՝ օգնելու ձեզ վճարել ծրագրի համար Շուկայի միջոցով:

**Լեզվական մատչելիության ծառայություններ.**

- Spanish (Español): Para obtener asistencia en Español, llame al **1-844-854-7272**.
- Tagalog (Tagalog): Kung kailangan ninyo ang tulong sa Tagalog tumawag sa **1-844-854-7272**.
- Chinese (中文): 如果需要中文的帮助, 请拨打这个号码 **1-844-854-7272**.
- Navajo (Dine): Dinek'ehgo shika at'ohwol ninisingo, kwijigo holne' **1-844-854-7272**.

***Տեսելու համար նմուշներ, թե այս ծրագիրը ինչպես կարող է ապահովագրել բժշկական իրավիճակի ծախսերը, տեսեք հաջորդ բաժինը:***

**PRA բացահայտման հայտարարագիր.** 1995թ. Թղթաբանության նվազեցման ակտի (Paperwork Reduction Act, PRA) համաձայն՝ ոչ ոք պարտավոր չէ պատասխանել տեղեկության հավաքագրմանը, եթե այն չունի վավեր Կառավարման և բյուջեի օրասենյակի (Office of Management and Budget, OMB) վերահսկման համար: Այս տեղեկության հավաքման վավերական OMB համարն է **0938-1146**: Այս տեղեկության հավաքման լրացման համար պահանջվող ժամանակը գնահատվում է որպես **0,08** ժամ յուրաքանչյուր պատասխանի համար, ներառած՝ հրահանգները վերանայելու, առկա տվյալների աղբյուրները որոնելու, անհրաժեշտ տվյալները հավաքելու և տեղեկության հավաքման ամբողջացնելու և վերանայելու ժամանակը: Եթե ունեք մեկնաբանություններ ժամանակի գնահատման (ներքի) վերաբերյալ կամ առաջարկություններ այս ձևաթուղթը բարելավելու համար, խնդրում ենք գրել այս հասցեով՝ PRA Reports Clearance Officer, Mail Stop C4-26-05, Baltimore, Maryland 21244-1850:

\* Սահմանափակումների և բացառությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ծրագրի կամ ապահովագրության փաստաթղթերը [lacare.org](http://lacare.org) կայքում:



**Սա արժեքի գնահատում չէ:** Ներկայացված բուժումները պարզապես օրինակներ են, թե ինչպես կարող է այս [ծրագիրն](#) ապահովագրել բժշկական խնամքը: Ձեր փաստացի ծախսերը տարբեր կլինեն՝ կախված ձեր ստացած խնամքից, ձեր [մատակարարների](#) գանձած գումարներից և բազմաթիվ այլ գործոններից: Կենտրոնացեք [ճախսաբաժինի](#) գումարների ([հանելի գումարներ](#), [համավճարներ](#) և [համապահովագրություն](#)) և [բացառված ծառայությունների](#) վրա, որոնք առաջարկվում են [ծրագրի](#) շրջանակներում: Օգտագործեք այս տեղեկատվությունը՝ համեմատելու համար ծախսերի այն մասը, որը կարող էր վճարել առողջապահական տարբեր [ծրագրերի](#) շրջանակներում: Նկատի ունեցեք, որ ապահովագրության այս օրինակները հիմնված են միայն անհատական ապահովագրության վրա:

| <b>Փեզը երեխա է ունենում</b><br>(9 ամիս ցանցում նախածննդային խնամք և ծննդաբերություն հիվանդանոցում)  |                |
|--|----------------|
| ■ <a href="#">Ծրագրի</a> ընդհանուր <a href="#">հանելի գումարը</a>  | \$             |
| ■ <a href="#">Մասնագետ [ճախսաբաժին]</a>  | \$             |
| ■ Հիվանդանոց (հաստատություն) <a href="#">[ճախսաբաժին]</a>  | %              |
| ■ Այլ <a href="#">[ճախսաբաժին]</a>   | %              |
| Այս ՆՄՈՒՇ դեպքը ներառում է հետևյալ <a href="#">ծառայությունները</a><br><a href="#">Մասնագետի</a> գրասենյակային այցելություններ ( <i>նախածննդային խնամք</i> )<br>Երկունքի/ծննդաբերության մասնագիտացված <a href="#">ծառայություններ</a><br>Երկունքի/ծննդաբերության հաստատության <a href="#">ծառայություններ</a><br><a href="#">Ախտորոշիչ ստուգումներ</a> ( <i>ուլտրաձայն և արյան անալիզ</i> )<br><a href="#">Մասնագետի</a> այցելություն ( <i>անզգայացում</i> ) |                |
| <b>Նմուշի ընդհանուր արժեքը</b>   | <b>\$12700</b> |
| Այս նմուշում Փեզը կվճարի՝<br><i>Ծախսաբաժին</i>   |                |
| <a href="#">Հանելի գումարներ</a>   | \$0            |
| <a href="#">Համավճարներ</a>  | \$50           |
| <a href="#">Համապահովագրություն</a>  | \$0            |
| <i>Ինչն ապահովագրված չէ</i>  |                |
| Սահմաններ կամ բացառություններ  | \$60           |
| <b>Փեզը կվճարի ընդհանուր</b>   | <b>\$110</b>   |

| <b>Ջոյի 2-րդ տիպի շաքարախտի կառավարում</b> (լավ կառավարվող վիճակի մի տարի ցանցում ստացվող սովորական խնամք)   |               |
|--|---------------|
| ■ <a href="#">Ծրագրի</a> ընդհանուր <a href="#">հանելի գումարը</a>  | \$            |
| ■ <a href="#">Մասնագետ [ճախսաբաժին]</a>  | \$            |
| ■ Հիվանդանոց (հաստատություն) <a href="#">[ճախսաբաժին]</a>  | %             |
| ■ Այլ <a href="#">[ճախսաբաժին]</a>   | %             |
| Այս ՆՄՈՒՇ դեպքը ներառում է հետևյալ <a href="#">ծառայությունները</a><br><a href="#">Առաջնային խնամքի բժշկի</a> գրասենյակային այցելություն ( <i>ներառյալ հիվանդության մասին կրթություն</i> )<br><a href="#">Ախտորոշիչ ստուգումներ</a> ( <i>արյան անալիզներ</i> )<br><a href="#">Դեղատոմսային դեղեր</a><br><a href="#">Տեսական օգտագործման բժշկական սարքեր</a> ( <i>զյուկոզայի չափիչ</i> ) <sup>o</sup> |               |
| <b>Նմուշի ընդհանուր արժեքը</b>   | <b>\$5600</b> |
| Այս նմուշում Ջոն կվճարի՝<br><i>Ծախսաբաժին</i>  |               |
| <a href="#">Հանելի գումարներ</a>   | \$0           |
| <a href="#">Համավճարներ</a>  | \$290         |
| <a href="#">Համապահովագրություն</a>  | \$0           |
| <i>Ինչն ապահովագրված չէ</i>  |               |
| Սահմաններ կամ բացառություններ  | \$815         |
| <b>Ջոն կվճարի ընդհանուր</b>  | <b>\$1105</b> |

| <b>Միայի պարզ կոտրվածքը</b><br>(ցանցում շտապ օգնության կայանի այցելություն և հետևման խնամք)   |               |
|---|---------------|
| ■ <a href="#">Ծրագրի</a> ընդհանուր <a href="#">հանելի գումարը</a>   | \$            |
| ■ <a href="#">Մասնագետ [ճախսաբաժին]</a>   | \$            |
| ■ Հիվանդանոց (հաստատություն) <a href="#">[ճախսաբաժին]</a>   | %             |
| ■ Այլ <a href="#">[ճախսաբաժին]</a>  | %             |
| Այս ՆՄՈՒՇ դեպքը ներառում է հետևյալ <a href="#">ծառայությունները</a><br><a href="#">Շտապ օգնության կայանի խնամք</a> ( <i>ներառյալ բժշկական պարագաներ</i> )<br><a href="#">Ախտորոշիչ ստուգում</a> ( <i>ռենտգեն</i> )<br><a href="#">Տեսական օգտագործման բժշկական սարքեր</a> ( <i>հենսկներ</i> )<br><a href="#">Վերականգնողական ծառայություններ</a> ( <i>ֆիզիկական թերապիա</i> ) |               |
| <b>Նմուշի ընդհանուր արժեքը</b>  | <b>\$2800</b> |
| Այս նմուշում Միան կվճարի՝<br><i>Ծախսաբաժին</i>  |               |
| <a href="#">Հանելի գումարներ</a>  | \$0           |
| <a href="#">Համավճարներ</a>   | \$70          |
| <a href="#">Համապահովագրություն</a>   | \$0           |
| <i>Ինչն ապահովագրված չէ</i>   |               |
| Սահմաններ կամ բացառություններ   | \$0           |
| <b>Միան կվճարի ընդհանուր</b>  | <b>\$70</b>   |